ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշսթի 1

№ 539-Ա « 30 » հունվարի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԻՑՑԱ ՔԱՂԱՔ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Նիցցայի քաղաքապետ, Նիցցայի Կոտ դ'Ազյուր Մետրոպոլիայի նախագահ, Նիցցա Պրովանս–Ալպեր–Կոտ դ'Ազյուր շրջանի նախագահի հատուկ հանձնարարականներով պատվիրակ Քրիստիան Էստրոզիի հրավերը՝ «Կեցցե՛ թագուհին» կարգախոսը կրող Նիցցայի դիմակահանդեսին մասնակցելու, ինչպես նաև քաղաքային տնտեսության կառավարման բնագավառում փորձի փոխանակման նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2026 թվականի փետրվարի 13-ից 15-ը ներառյալ գործուղել Ֆրանսիայի Հանրապետության Նիցցա քաղաք՝ հետևյալ կազմով.

Մարիա Աղաջանովա	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալ
Սոնա Թևանյան	Երևանի քաղաքապետի խորհրդական

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված ծախսերն իրականացվում են Երևանի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին, բացառությամբ՝ գիշերավարձի, որը հոգում է հրավիրող կողմը:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալ Մարիա Աղաջանովայի բացակայության ընթացքում աշխատակազմի քարտուղարի տեղակալի պարտականությունների կատարումը վերապահել աշխատակազմի քարտուղարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Վարազդատ Ահարոնյանին:

4. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ